

Տասնորդական կոտորակներ

Առաջադրանքներ

1) Տրված կոտորակներից որո՞նք են տասնորդական.

Օրինակ՝ $\frac{17}{100}$ – ը տասնորդական կոտորակ է:

- $\frac{3}{4}$; $\frac{25}{100}$; $\frac{36}{50}$; $\frac{13}{1000}$; $\frac{1}{10}$; $\frac{12}{45}$

2) Գրե՛ք տվյալ կոտորակին հավասար տասնորդական կոտորակ.

Օրինակ՝ $\frac{1}{4} = \frac{1 \cdot 25}{4 \cdot 25} = \frac{25}{100}$, պետք է այդ կոտորակի համարիչը և

հայտարարը բազմապատկել 25-ով, որպեսզի հայտարարում ստանանք 1-ից տարբեր կարգային միավոր: Տվյալ օրինակում 100:

- $\frac{3}{4}$
- $\frac{3}{5}$

3) Տասնորդական կոտորակից անջատե՛ք նրա ամբողջ մասը.

Օրինակ՝ $\frac{36}{10} = 3\frac{6}{10}$, քանի որ $36:10=3(6մն.)$,

ամբողջ մասը կլինի 3-ը:

- $\frac{48}{10} =$
- $\frac{126}{100} =$

4) Առանձնացրե՛ք տասնորդական կոտորակի կոտորակային մասը.

$\frac{31}{10} = 3\frac{1}{10}$, քանի որ $31:10=3(1մն.)$, կոտորակային մասը կլինի $\frac{1}{10}$ – ը:

- $\frac{28}{10} =$

- $\frac{356}{100} =$

5) Դիրքային գրառումով գրե՛ք տասնորդական կոտորակը.

Օրինակ՝ $\frac{36}{10} = 3,6$

$$\begin{array}{r} 254 \\ \hline 100 \\ 25 \\ \hline 10 \\ 15 \\ \hline 1000 \end{array}$$

6) Տասնորդական կոտորակը գրե՛ք սովորական կոտորակի տեսքով.

Օրինակ՝ $3,35 = \frac{335}{100}$

- 1,34
- 25,6
- 1,03

7) Գրելով տասնորդական կոտորակը դիրքային գրառումով՝ գտե՛ք նրա ամբողջ մասը.

Օրինակ՝ $\frac{25}{10} = 2,5$ ՝ տասնորդական կոտորակի ամբողջ մասը 2 է:

- $\frac{35}{10}$
- $\frac{156}{100}$

8) Գրելով տասնորդական կոտորակը դիրքային գրառումով՝ գտե՛ք նրա կոտորակային մասը.

Օրինակ՝ $\frac{25}{10} = 2,5$: Տասնորդական կոտորակի կոտորակային

մասը 0,5 է կամ $\frac{5}{10}$ -ը:

- $\frac{35}{10}$
- $\frac{156}{100}$

9) Թվանշաններով գրե՛ք կոտորակը.

ա) Չորս ամբողջ հինգ հարյուրերորդական,

բ) վեց ամբողջ քսանմեկ հազարերորդական,

գ) զրո ամբողջ չորս հարյուր երեսունմեկ հազարերորդական: